«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ, 2.4-րդ, 2.5-րդ և 2.6-րդ մասերով.

«**2.1.** ՀՀ հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործեր կարող են միացվել մեկ վարույթում, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը:

2.2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կողմը կարող է ՀՀ հակակոռուպցիոն դատարան ներկայացնել տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին միջնորդություն: Միջնորդությունը ներկայացվում և քննվում է այն դատավորի կողմից, որի վարույթում քննվող գործով հայցադիմումն ավելի վաղ է ընդունվել վարույթ:

2.3. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում քննվող մի քանի գործեր մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում և դրա վերաբերյալ կայացվում է որոշում այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում: Միջնորդության քննության արդյունքում կայացված որոշումն անհապաղ ուղարկվում է միացվող գործը քննող մյուս դատավորին:

2.4. Եթե որոշումն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում միացվող գործը քննող դատավորը չի կայացնում գործի քննությունը տարբեր վարույթներում շարունակելու մասին որոշում, ապա գործն անհապաղ հանձնվում է գործը մեկ վարույթում միացնելու մասին որոշում կայացրած դատավորին:

2.5. Եթե որոշումն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում միացվող գործը քննող դատավորը կայացնում է գործի քննությունը տարբեր

վարույթներում շարունակելու մասին որոշում, ապա գործերը դատավորների վարույթում շարունակվում են քննվել առանձին:

2.6. Երկու և ավելի գործեր մեկ վարույթում միացնելու մասին որոշում կայացվելու դեպքում գործերը միացվում են մեկ վարույթում, բացառությամբ այն գործի, որով կայացվել է գործի քննությունը տարբեր վարույթում շարունակելու մասին որոշում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: